600.0241.26.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2019 թվականի №241Ա

քաղ. Երևան

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՑԱՆՑՈՒՄ ԶԱՆԳԵՐԻ ՎԵՐՋՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՕՊԵՐԱՏՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հուլիսի 24-ի №259Ն որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ զանգի վերջնավորման ծառայությունը դասակարգվել է որպես հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն, որն ապահովում է որոշակի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորի կողմից այլ օպերատորի ցանցում սկզբնավորված զանգի ուղղորդումը փոխկապակցման կետից մինչև բաժանորդային սարքավորման միացման կետն ընկած հատվածում,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 24-ի №259Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ անհատական հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջավորման մեծածախ շուկան սահմանվել է որպես հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկա,

գ) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 10-ի №686Ա որոշմամբ տրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0494 լիցենզիայի համաձայն՝ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցի շահագործմամբ, հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ է մատուցում՝ օգտագործելով Հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրամադրված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կոդերով և ոչ աշխարհագրական կոդերով համարներ,

դ) Ընկերությունն իր հանրային ամրակցված հեռախոսացանցում մատուցում է զանգի վերջնավորման ծառայություն և իր հանրային ամրակցված հեռախոսացանցում զանգերի վերջնավորման մեծածախ շուկայում չունի որևէ մրցակից,

ե) Հանձնաժողովը 2019 թվականի ապրիլի 10-ին իրականացրել է հանրային իրազեկում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող ընկերություններին իրենց անհատական հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու մտադրության վերաբերյալ, որը զետեղվել է Հանձնաժողովի պաշտոնական www.psrc.am կայքում, և որի վերաբերյալ Հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 10-ի ՆՄՄ-714Հ – ՆՄՄ-723Հ գրություններով ծանուցվել են նաև հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող ընկերությունները,

զ) Հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 10-ի ՆՄՄ/2.2-23/578-19 գրությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող ընկերություններին իրենց անհատական հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ ճանաչելու վերաբերյալ հարցը, որին ի պատասխան՝ 2019 թվականի ապրիլի 16-ի N870-2019 գրությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը հայտնել է, որ հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման ծառայությունների շուկայում չունի իրականացված ուսումնասիրություն, ուստի նշված հարցի վերաբերյալ չի կարող դիրքորոշում ներկայացնել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 22-րդ, 23-րդ հոդվածները Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը ճանաչել իր հանրային ամրակցված հեռախոսացանցում զանգերի վերջնավորման մեծածախ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
26 հունիսի 2019թ.